



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 54 12.03. 2020 թ.


ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Ղուկասյանին

Կից Ձեզ են ներկայացնում Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 05, 06 ,
07 որոշումները հավելվածների հետ:
Առդիր 11 էջ:

Համայնքի ղեկավար



Հ. Ռոստոմյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Քարաձոր համայնք,
հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» մարտի 2020 թվականի N 05

**ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քարաձոր համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք,
հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 06 » մարտի 2020 թվականի N 06

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ՄԱՍԻՆ

Քարաձոր համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Քարաձոր համայնքի.
 - 1) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
 - 2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴՐՈՍՏՈՄՅԱՆ



ԿԱԶՄ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Հ. Սահակյան /աշխատակազմի առաջատար մասնագետ /,
3. խորհրդի անդամներ՝
 - 1) ավագանի Վահրամ Կարապետյան
 - 2) ավագանի Իշխան Պետրոսյան
 - 3) ոլորտային պատասխանատուներ՝
 - ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Արմեն Սարգսյան / համայնքի բնակիչ / (համաձայնությամբ),
 - բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Կամո Մանուկյան / ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ / (համաձայնությամբ),
 - գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Հովհաննես Սարգսյան / համայնքի բնակիչ / (համաձայնությամբ),
 - դ. կապի պատասխանատու՝ Արշակ Ավետիսյան / «Հայփոստ» ՓԲԸ-ի ավագ օպերատոր / (համաձայնությամբ),
 - ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Անուշ Մատինյան / Քարածորի ԲՄԿ-ի բուժքույր / (համաձայնությամբ),
 - զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Մասիս Հովակիմյան / Ա/Ձ/
 - է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Գնել Սահակյան / «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի Սպիտակի էլ.ցանցի տեսուչ / (համաձայնությամբ),
 - ը. ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Գառնիկ Սարգսյան / համայնքի բնակիչ /,
 - թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Զարգանդ Բարսեղյան / համայնքապետարանի տեխնիկական աշխատող /,
 - ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Արթուր Մատինյան /:

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Քարածոր համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Քարածորի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

2. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

- 1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,
- 2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,
- 3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,
- 4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,
- 5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,
- 6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌԼ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

3. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Լոռու մարզ գ. Քարաձոր
Հեռ. 098-56-16-00
Էլ. հասցե qaradzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» մարտի 2020 թվականի N 07

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐԺԱՆՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քարաձոր համայնքի ղեկավարի 2020թ. մարտի 06-ի որոշմամբ հաստատված Քարաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգի 13-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի ընթացքում կազմակերպել և անցկացնել վարժանք «Ուժեղ քանու սպանալիքի կամ առաջացման ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել Արսեն Սամվելի Կարապետյանին (ավագանու անդամ):

Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) նախապատրաստել և իմ հաստատմանը ներկայացնել վարժանքի անցկացման պլանը (կարգը, հերթականությունը):

2) կազմել մասնակիցների ցանկը և տեղեկացնել մասնակիցներին իրենց վերապահված գործողությունների վերաբերյալ:

3) վարժանքի անցկացումից հետո մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել վարժանքի ամփոփաթերթ վարժանքի ժամանակ ի հայտ եկած թերությունների և դրանց վերացման առաջարկությունների վերաբերյալ:

3. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Շ. ՈՒՍՏՈՄՅԱՆ



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՎԱՐՇԱՆՔԻ ՆՈՐԱԴԱՐԱՆԻ ԲՈՍՏՈՍՅԱՆ



«06» մարտի 2020

ՊԼԱՆ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՇԱՆՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեմա՝ Քարաձոր համայնքի «Ուժեղ քամու սպաննալիքի կամ առաջացման ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպում և

հետևանքների վերացում >> թեմայով,

Նպատակը՝ 1) ստուգել համայնքապետարանի անձնակազմի, ռըրտային պատասխանատուների

պատրաստվածությունը,

2) համայնքապետարանի անձնակազմի տեսական և գործնական գիտելիքների կիրառումը ստեղծված իրավիճակում,

3) արտակարգ իրավիճակներում արձագանքող ուժերի և

համայնքապետարանի հետ փոխգործակցության արդյունավետության

բարձրացումը,

4) արտակարգ իրավիճակների կանխարգելման կարողությունների

կատարելագործումը:

Ուսումնավարժությանը ներգրավում են՝ Քարաձորի համայնքապետարանի աշխատակազմ,

Տնօրությունը՝ 2 ժամ:

Անցկացման վայրը՝ Քարաձորի վարչական տարածք,

Նյութատեխնիկական ապահովումը՝ Քարաձորի համայնքապետարան,

Անցկացման օրը՝ « 2020թ.,

Ժամը	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
	Ելակետային իրավիճակ. Նկարագրվում է որևէ իրավիճակ (երկրաշարժ, հրդեհ, ջրհեղեղի սպառնալիք և այլն), իրավիճակը վերցվում է տվյալ ԱՌԿ Հավելված N 6-ից՝ «Պլանի ստանդարտ գործողությունների ընթացակարգեր ըստ բնորոշ աղետների»		
10:00	Ազդարարման կազմակերպում		
	Տարհանման կազմակերպում		
	Տարհանումից հետո բնակչության հաշվառում		
	և այլն		

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԸ

Շահ

Ս. Կարապետյան

(ստորագրություն անուն, ազգանուն)

ՔԱՐՄԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՎԱՐԺԱՆՔԻ

ԱՄՓՈՓԱԳԻՐ ԹԻՎ _____

(Կազմված է « _____ » _____ 2020 թ. և բաղկացած է _____ էջից)

Վարժանքի անցկացման թեման՝ «Ուժեղ քանու սպառնալիքի կամ առաջացման ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով Անցկացման օրը՝ « _____ » _____ 2020թ.,

Վայրը՝ Քարաձոր վարչական տարածք,

Նպատակը՝ 1) ստուգել համայնքապետարանի անձնակազմի, ոլորտային

պատասխանատուների պատրաստվածությունը,

2) համայնքապետարանի անձնակազմի տեսական և գործնական գիտելիքների կիրառումը ստեղծված իրավիճակում,

3) արտակարգ իրավիճակներում արձագանքող ուժերի և

համայնքապետարանի հետ փոխգործակցության արդյունավետության բարձրացումը,

4) արտակարգ իրավիճակների կանխարգելման կարողությունների կատարելագործումը:

Մասնակիցներ՝ 1) ԱՌԿ խորհուրդ (_____ մարդ),

2) համայնքապետարանի անձնակազմ (_____ մարդ),

3) և այլն (_____ մարդ):

Ստեղծված իրավիճակներում մասնակիցների

ընդունած որոշումների մասին՝ 1) _____,

2) _____,

3) _____:

Ուսումնավարժությանն առավել լավ

պատրաստված ստորաբաժանման մասին՝

1) _____,

2) _____,

3) _____:

Վարժանքի ընթացքում ի

հայտ եկած թերություններ՝ 1) _____,

2) _____,

3) _____:

Թերությունների վերացման ուղղությամբ

տրված առաջարկություններ՝ 1) _____,

2) _____,

3) _____:

Հետագա քայլեր և պատասխանատուներ՝

1) _____,

2) _____,

3) _____:

Վարժանքի անցկացման վերաբերյալ
տրված գնահատական՝ «բավարար», «լավ», «գերազանց»:

Վարժանքի ղեկավար (ԱՌԿ խորհրդի ղեկավար/համայնքի ղեկավար)՝

Պ.Վ.Գ. \

(ստորագրողին)

Հ. Ռոստոմյան
(անուն, ազգանուն)